# ՆՇԱՒԱԿ

Կարգադրութիւն Հայոց վասն կառավարութեան Հայաստանեաց յԱշխարհի։

## ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

### ԳԼՈՒԽ Ա.

*Ծանեաք և 'ի վերայ ծանօթութեան մերոյ հաստատեցաք, որ 'ի ծագել արևու յաշխարհէն մերոյ աղուանից և 'ի դռանէ ալանաց առ հարաւ կոյս մինչև 'ի յաշխարհն մեր կորճկա հայք, 'ի ոտն տորոս լերան, և անտի առ արևմուտ մինչև անտիոքն մեծ 'ի ափն միջերկրեաց ծովու, և անտի հիւսիս մինչև մամաստիա, և անտի առ արևմուտ մինչև կիլիկիա յաշխարհն մեր երրորդ Հայք, կիլիկիունց առ հիւսիս մինչև լօնօպօնտօս ափն սևաւ ծովի, և անտի առ արևել հիւսիս մինչև տայք յաշխարհն մեր, և 'ի տայքու առ արևել մինչև յաշխարհն մեր աղվանք և 'ի դրունս ալանաց։ Եւ 'ի արևմուտ կողմանէ 'ի ափէն միջերկրեաց ծովէ մեծ անտիոքէ առ արևել կոյս մինչև վերջն տորոս լեռան 'ի ափն կասպից ծո-*